ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/146»

ք. Երևան <<23>> հունիսի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «Վերելակ-7» ՍՊ ընկերությունը (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ենգիբարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ԳՆՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 ԳՆՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14581050 (տասնչորս միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (հավելված 2) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը

ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Վերելակ-7» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան,Դրոյի 8/2շ. 5բն.
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ»Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 900032542095	Հ/Հ 16040064490401
ՀՎՀՀ 02593108	ՀՀՎՀ 00887669
Է. Կիրակոսյան ----------	Գ. Ենգիբարյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«23» հունիսի 2020թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/146» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
Չ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	42418100/148	կարապիկ, ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	կարապիկ կոմպլեկտ, արագությունը 1 մ/վրկ /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	1320000	3960000	3	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	3	մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը
2	42418100/149	ներդիր ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	ներդիր ռեզինով, պլաստմասե, որի վրա հագցված է ռեզին, տատանումները մեղմելու համար, Φ16,Φ14 և Φ6 չափերի նոր /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	4950	594000	120		120	
3	42418100/150	ուժային կոնտակտոր ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	ուժային կոնտակտոր, գործարանային /տեղադրվում է մատակարարի կողմից/	կոմպ	24200	387200	16		16	
4	42418100/151	հարկային փոխանջատիչ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	հարկային փոխանջատիչ, գործարանային չոգտագործված /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	9900	217800	22		22	
5	42418100/152	ռելե ՌՊՈՒ-4 ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	գործարանային չոգտագործված ռելեն պետքե ունենա 8 զույգ կոնտակտ 110 վոլտ հաստատուն հոսանք /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	9900	693000	70		70	

6	42418100/153	տանող անիվ Φ-770 ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	տանող անիվ Φ-770 չուգունե,ճոպանների համար նախատեսված պսակը Φ 10.5 մմ ճոպանին համապատասխան շառավիղ /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	225500	676500	3		3	
7	42418100/154	ձգող սարք ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	ձգող սարք,կոմպլեկտ թևերով և հոլովակով արագության սահմանափակիչ ճոպանը կարգավորելու համար,պետք է աշխատի սահուն /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	77000	385000	5		5	
8	42418100/155	դռան փոխանցման տուփ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	650 մմ դռների բացվածք ունեցող դռների համար /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	107800	539000	5		5	
9	42418100/156	արագության սահմանափակիչ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	արագության սահմանափակիչ,գործարանային կապարակնքված /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	77000	616000	8		8	
10	42418100/157	հակակշիռի զսպանակ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	հակակշիռի զսպանակ,կարծր զսպանակային պողպատից, հակաշիռի տատանումները մեղմացնելու համար /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	17930	430320	24		24	
11	42418100/158	ճոպան Φ8.2 մմ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	ճոպան Φ8.2 մմ, ԳԼ տիպի, ГОСТ 3077-69 /տեղադրվում է մատակարարի կողմից/	մետր	990	260370	263		263	
12	42418100/159	կիսակցորդիչ մատիկներով ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	կիսակցորդիչ մատիկներով, չուգունե գործարանային արտադրության /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	64900	129800	2		2	
13	42418100/160	գլխավոր էլեկտրաշարժիչ ԿՄՁ, «Կարաչարովսկու մեխանիկական գործարան» ՓԲԸ	գլխավոր էլեկտրաշարժիչ,ասինխրոն,երկու արագությամբ, 4.5-1.8 կվ հզոր. /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	275000	275000	1		1	

14	42418100/161	ռեդուկտոր ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	ռեդուկտորի թագանիվ և որդնյակ,ՀԹԽ-160-50 տիպի միջառանցքային հեռավորությունը 160 մմ, տանող ակոսով անիվը Φ770մմ. /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	935000	2805000	3		3	
15	42418100/162	հակակշիռի զսպանակի ձող ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	հակակշիռի զսպանակի ձող,որի վրա ձգվում է հակակշիռի զսպանակը,գործարանային /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	29700	89100	3		3	
16	42418100/163	որսիչների համակարգ ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	որսիչների համակարգ, որը վերելակի արագությունը 15 % գերազանցելու դեպքում կանգնեցնում է,գործարանային /տեղադրվում է մատակարարի կողմից/	կոմպ	119900	119900	1		1	
17	42418100/164	հարկային դուռ ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	հարկային դուռ, գործարանային արտադրության /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	19800	118800	6		6	
18	42418100/165	կախովի մալուխ 18*1 ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	կախովի մալուխ խկթխ-18x1ամբողջական,18 թելանոց /տեղադրվում է մատակարարի կողմից/	մետր	178200	1069200	216		216	
19	42418100/166	հրամանի ապարատ ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	հրամանի ապարատ,նոր չոգտագործված /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	74800	374000	5		5	
20	42418100/167	ճոպան Φ 10.5 մմ ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	ճոպան Φ 10.5 մմ ԳԼ տիպի, ГОСТ 3077-69 չոգտագործված, /տեղադրվում է մատակարարի կողմից/	մետր	1188	659340	555		555	
21	42418100/168	ժամանակի ռելե ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	ժամանակի ռելե,տվյալ վերելակի մոդելին համապատասխան /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	14300	14300	1		1	
22	42418100/169	կանչի ապարատ ԿՄՅ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	կանչի ապարատ,տվյալ վերելակի մոդելին համապատասխան /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	8800	44000	5		5	

23	42418100/170	վերջնային անջատիչ КМЗ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	վերջնային անջատիչ ԲՊԿ-2011 կամ 2111 գործարանային, չոգտագործված /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	4840	14520	3		3	
24	42418100/171	արգելակման համակարգի կոճղակ КМЗ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	արգելակման համակարգի կոճղակ, վերելակի կանգերը ապահովելու համար, չոգտագործված /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	9900	19800	2		2	
25	42418100/172	առաձգակալ 311 КМЗ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	առաձգակալ 311 /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	14850	29700	2		2	
26	42418100/173	էլ շարժիչի կափարիչ /AC-72/ КМЗ, «Կարաչարովսկու մեխանիկական գորշարան» ՓԲԸ	էլ շարժիչի կափարիչ /AC-72/ առջևի և հետևվի,գործարանային /տեղադրվում է մատակարարի կողմից/	հատ	29700	59400	2		2	

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Վերելակ-7» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Դրոյի 8/2շ. 5բն.
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ»Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 900032542095	Հ/Հ 16040064490401
ՀՎՀՀ 02593108	ՀՀՎՀ 00887669
Է. Կիրակոսյան ----------	Գ. Ենգիբարյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«23» հունիսի 2020թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/146» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	42418100/148	կարապիկ	------	------	------	------	------	1980000	3168000	3168000	3168000	3960000	3960000	3960000	3960000
2	42418100/149	ներդիր	------	------	------	------	------	297000	475200	475200	475200	594000	594000	594000	594000
3	42418100/150	ուժային կոնտակտոր	------	------	------	------	------	193600	309760	309760	309760	387200	387200	387200	387200
4	42418100/151	հարկային փոխանջատիչ	------	------	------	------	------	108900	174240	174240	174240	217800	217800	217800	217800
5	42418100/152	ռելե ՌՊՈՒ-4	------	------	------	------	------	346500	554400	554400	554400	693000	693000	693000	693000

6	42418100/153	տանող անիվ Φ-770	------	------	------	------	------	338250	541200	541200	541200	676500	676500	676500	676500
7	42418100/154	ձգող սարք	------	------	------	------	------	192500	308000	308000	308000	385000	385000	385000	385000
8	42418100/155	դռան փոխանցման տուփ	------	------	------	------	------	269500	431200	431200	431200	539000	539000	539000	539000
9	42418100/156	արագության սահմանափակիչ	------	------	------	------	------	308000	492800	492800	492800	616000	616000	616000	616000
10	42418100/157	հակակշիռի զսպանակ	------	------	------	------	------	215160	344256	344256	344256	430320	430320	430320	430320
11	42418100/158	ճոպան Φ 8.2 մմ	------	------	------	------	------	130185	208296	208296	208296	260370	260370	260370	260370
12	42418100/159	կիսակցորդիչ մատիկներով	------	------	------	------	------	64900	103840	103840	103840	129800	129800	129800	129800
13	42418100/160	գլխավոր էլեկտրաշարժիչ	------	------	------	------	------	137500	220000	220000	220000	275000	275000	275000	275000
14	42418100/161	ռեդուկտոր	------	------	------	------	------	1402500	2244000	2244000	2244000	2805000	2805000	2805000	2805000

15	42418100/162	հակակշիռի զսպանակի ձող	------	------	------	------	------	44550	71280	71280	71280	89100	89100	89100	89100
16	42418100/163	որսիչների համակարգ	------	------	------	------	------	59950	95920	95920	95920	119900	119900	119900	119900
17	42418100/164	հարկային դուռ	------	------	------	------	------	47520	95040	95040	95040	118800	118800	118800	118800
18	42418100/165	կախովի մալուխ 18*1	------	------	------	------	------	534600	855360	855360	855360	1069200	1069200	1069200	1069200
19	42418100/166	հրամանի ապարատ	------	------	------	------	------	187000	299200	299200	299200	374000	374000	374000	374000
20	42418100/167	ճոպան Φ 10.5 մմ	------	------	------	------	------	329670	527472	527472	527472	659340	659340	659340	659340
21	42418100/168	ժամանակի ռելե	------	------	------	------	------	7150	11440	11440	11440	14300	14300	14300	14300
22	42418100/169	կանչի ապարատ	------	------	------	------	------	22000	35200	35200	35200	44000	44000	44000	44000

23	42418100/170	վերջնային անջատիչ	------	------	------	------	------	7260	11616	11616	11616	14520	14520	14520	14520
24	42418100/171	արգելակման համակարգի կոճղակ	------	------	------	------	------	9900	15840	15840	15840	19800	19800	19800	19800
25	42418100/172	առաձգակալ 311	------	------	------	------	------	14850	23760	23760	23760	29700	29700	29700	29700
26	42418100/173	էլ շարժիչի կափարիչ /AC-72/	------	------	------	------	------	29700	47520	47520	47520	59400	59400	59400	59400

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Վերելակ-7» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Դրոյի 8/2շ. 5բն.
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ»Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 900032542095	Հ/Հ 16040064490401
ՀՎՀՀ 02593108	ՀՀՎՀ 00887669
Է. Կիրակոսյան ----------	Գ. Ենգիբարյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 3
«23» հունիսի 2020թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/146» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» հունիսի 2020թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/146» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախապատրաստած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն